

ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՌՈՒՅՑ ԹԵՂՈՒՏՈՒՄ

Բաբաջանյան Ա. (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտ, Հայաստան)

babajanyanastghik@yahoo.com

Բանալի բառեր՝ մշակույթ, հնագիտություն,
ճարտարապետություն, տապանաքար, խաչքար, արձանագրություն:

2010 թ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբի կողմից (արշավախումբի ղեկավար՝ պ. գ. թ. Ս. Գ. Հոբոսյան) Թեղուտի հանքավայրի հետ կնքած պայմանագրով, «Թեղուտի հանքավայրի իրացման գոտում հայտնված պատմամշակութային հուշարձանների հնագիտական ուսումնասիրություն և պեղումներ» իրականացնելու ծրագրի շրջանակներում պեղումներ կատարվեցին «Ղարաքոթուկի հողեր» կոչված հնավայրում, որի հյուսիս-արևմտյան մասում է գտնվում միջնադարյան գերեզմանոցը՝ ավերված եկեղեցու հետքերով: Հնավայրը գտնվում է Լոռու մարզի Շնող գյուղից 2 կմ հարավ՝ Շնող գետի և նրա ձախակողմյան վտակ Խառատանոցի ջրի խառնման վայրից հարավ-արևմուտք գտնվող բարձրադիր հրվանդանի վրա: Ղարաքոթուկը որպես տեղանուն նշում է Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանը՝ տեղակայելով պատմական Արցախ նահանգի Զավե գավառում (ներկայիս Ղազախ): Նա նշում է, որ «Ակեղցու դաշ, Ղարաքեթիկ, Թեղուտ և Զորագեղ կոչուած տեղերում ևս կան աւերակ գիւղեր, եկեղեցիներ և հանգստարաններ»:

Կառույցը, գտնվելով հրվանդանի ամենաբարձր մասում, գերակա դիրք է գրավում շրջապատի նկատմամբ: Նրա շուրջ մոտ 2 հա տարածությամբ սփռված են տարբեր ձևի տապանաքարեր և խաչքարերի խարխիսներ:

Պեղման ավարտին պարզ դարձավ, որ շինության հատակագծային հորինվածքը բավական շեղումներ ուներ, որը մեր կարծիքով բազմաթիվ ու անփուլթ վերանորոգությունների արդյունք է: Այն հատակագծում մոտավորապես քառակուսի է՝ արևելյան մասում և ներքուստ, և արտաքուստ ընդգծված ուղղանկյուն խորանով: Հյուսիսից խորանին կից էր կիսակլոր արքիդով ավանդատունը: Խորանի բեմի առջև դրված էր մի տապանաքար, որն ուներ վրացերեն արձանագրություն: Այն մեկ ուրիշ սալաքարի հետ միասին կազմում էր բեմառեջքը:

Մեկ այլ վրացերեն արձանագրված տապանաքար էլ բացվեց խորանի և ավանդատան պատերի արտաքին անկյուն կազմող հատվածում: Այս երկու արձանագրությունները դեռ վերծանված չեն, հանձնվել են համապատասխան մասնագետների:

Հետաքրքրականն այն է, որ մատուռը չունի մուտք. ենթադրելի մուտքերը կարող են լինել միայն հարավային, կամ հյուսիսային կողմերում: Օրինաչափ համարվող արևմտյան կողմում դռան բացվածք լինելու փաստը բացառվում է, քանի որ արևմտյան պատից մոտ 0.4-0.5 մ սկսվում է լանջի զառիթափը:

Պեղումների արդյունքում հայտնաբերվել են ամբողջական և բեկորային խաչքարեր: Դրանցից երկուսը թվագրված են ՋԿԲ (1513 թ.) և ՌԾԳ (1604 թ.): Վերջինիս վրա պատկերված են երկու մարդկային ֆիգուրներ՝ երկար զգեստներով: Մնացած խաչքարերը բեկորային են, մոտ երկու տասնյակից ավելի, որոնց մեջ հանդիպում են և՛ 12-13-րդ դդ., և՛ 15-16-րդ դդ. բեկորներ:

Պեղումների ընթացքում գտնվեցին նաև հասարակ և ջնարակած խեցեղենի նմուշներ, որոնք ևս շատ բեկորային են, բայց ըստ կառուցվածքի և ոճի 15-16-րդ դդ. են թվագրվում:

Հարավ-արևելյան անկյունը մաքրելիս հայտնաբերվեց երկաթե իրերի հավաքածու, որի մեջ կային ձիու, եզան պայտեր, քերիչներ, փականք և այլ իրեր:

Թվագրություն ունեցող խաչքարերը 1513 թ. և 1604 թ., հայտնաբերված խեցեղեն նմուշները, քանդակային և խաչքարային բեկորները, տապանաքարերն իրենց տիպով, խորան հիշեցնող հատվածը՝ ուղղանկյուն, կառույցի հորինվածքից արտաքուստ ընդգծված, վրացերեն արձանագրությամբ տապանաքարերը, թույլ են տալիս մատուցել թվագրել 15-17 դդ.՝ չնայած այն հանգամանքին, որ նրա հորինվածքը ենթարկվել է բազում փոփոխությունների: Բոլոր փաստերը վկայում են, որ գործ ունենք գերեզմանական մատուռի հետ:

Այսպիսով, 2010 թ. «Ղարաքոթուկի հողեր» հնավայրում պեղումների արդյունքում բացվեց մի կառույց, միջնադարյան մի նորահայտ մատուռ, որը չնայած համեստ ձևերին, որոշակի ներդրում կարող է ունենալ հայոց մշակույթի ու հատկապես ՀՀ հյուսիս-արևելյան տարածքների ոչ դասական տիպի հոգևոր ճարտարապետության դեռևս շատ անպատասխան հարցերի ճշտման համար:

A NEW FOUND SPIRITUAL BUILDING IN TEGHUT

Babajanyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography, Armenia)